ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---- նոյեմբերի 2009 թ. N------Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2009թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ ------N-----Ն ՈՐՈՇՄԱՆ

ԿԱՆՈՆՆԵՐ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

Սույն կանոններով սահմանվում են Երևան քաղաքի կանաչ տնկարկներով և բուսածածկով զբաղեցված ընդհանուր օգտագործման տարածքների /այսուհետև՝ կանաչ տարածքներ/ պահպանման և վերարտադրության հետ կապված հարաբերությունները:

Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներ են հանդիսանում քաղաքի զբոսայգիները, անտառ-պուրակները, պուրակները, այգիները, ծառուղիները, սիզամարգերը և մայթեզրերի բուսածածկ տարածքները:

Կանաչ տարածքներում կանաչ տնկարկների պահպանումն ու վերարտադրությունը ներառում է դրանց հաշվառումը, գույքագրումը, գնահատումը, պահպանումը, խնամքը, տեղափոխումը և վերականգնումը նոր համարժեք կանաչ տարածքների ստեղծման միջոցով:

Կանաչ տարածքների թույլատրված օգտագործումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ դրանց նպատակային և գործառնական նշանակությամբ /ներառյալ իրավունքները և սահմանափակումները/՝ բնապահպանական փորձաքննության դրական եզրակացության հիման վրա:

2.Սույն կանոնների նկատմամբ հսկողություն իրականացնող լիազորված մարմինը

Սույն կանոնների նկատմամբ հսկողություն իրականացնող լիազորված մարմինը սահմանվում է Երևանի քաղաքապետի կողմից (այսուհետև լիազորված մարմին):

3. Կանաչ տարածքների պահպանման հիմնական սկզբունքները

Երևանի կանաչ տարածքների ամբողջ համակարգը ենթակա է պարտադիր պահպանման, բացառությամբ՝ անտառային գոտիների, որոնց պահպանումը իրականացվում է համաձայն ՀՀ Անտառային օրենսգրքի՝ համապատասխան մարմինների կողմից:

Կանաչ տարածքներում քաղաքաշինական և ձեռնարկատիրական գործունեությունը պետք է համապատասխանի դրանց պահպանման պահանջներին:

Կանաչ տարածքների օգտագործումն արգելվում է, եթե այն չի ապահովում կանաչ տարածքների բնականոն կենսագործունեությունը:

Կանաչ տարածքների ստեղծումը, ավելացումը և պահպանումը կատարվում է Երևան քաղաքի զարգացման ծրագրի համապատասխան:

4. Ծառերի, թփերի հատումը և բուսաշերտի տեղահանումը

Ծառերի, թփերի հատումը և բուսաշերտի տեղահանումը թույլատրվում է հետևյալ դեպքերում՝

- քաղաքի զարգացման ծրագրին համապատասխան մշակված, քաղաքաշինական փաստաթղթերով նախատեսված նախագծի իրականացման և օրենսդրությամբ սահմանված կարգով բնապահպանական փորձաքննության դրական եզրակացության առկայության.
- քաղաքի գլխավոր դենդրոլոգի հետ համաձայնեցնելուց հետո սանիտարական հատումների իրականացման և կանաչ գոտու վերաձևավորման և փոփոխության ենթարկման.
- սանիտարական և հակահամաճարակային հսկողություն իրականացնող մարմինների եզրակացության հիման վրա՝ բնակելի և ոչ բնակելի նորմատիվային լուսավորության ռեժիմի վերականգման.
- վթարային արտակարգ իրավիճակների վերացման, այդ թվում կապիտալ շինությունների և ստորգետնյա կոմունիկացիաների վերանորոգման /հետագա վերականգման պայմանով/:

Ծառերի ու թփերի հատումը, ինչպես նաև բուսաշերտի տեղահանումն իրականացվում է լիազորված մարմնի կողմից տրված թույլտվության առկայության դեպքում:

5. Փոխհատուցվող կանաչապատում

Փոխհատուցվող կանաչապատումը պարտադիր գործողություն է վնասված կամ ոչնչացված կանաչ տնկարկների վերարտադրման և վերականգման գործընթացում:

Կանաչ տարածքների ոչնչացման դեպքում փոխհատուցվող կանաչապատումը կատարվում է նույն հողատարածքում կամ լիազորված մարմնի կողմից առաջարկված մեկ այլ տարածքում հաստատված կանաչապատման նախագծի համաձայն:

Վերականգնվող կանաչ գոտու ծավալներն ու տեսականին սահմանվում են քաղաքի գլխավոր դենդրոլոգի կողմից և ամրագրվում են կանաչապատման նախագծում:

Փոխհատուցվող կանաչապատումն իրականացվում է կանաչ գոտուն վնաս հասցրած սուբյեկտի միջոցների հաշվին:

6. Կանաչ տարածքների օգտագործման պայմանները

Կանաչ տարածքներում արգելվում է՝

- կանաչ տնկարկների վնասումը կամ ոչնչացումը.
- տերևների, չոր խոտի այրումը և այլ հրդեհավտանգ իրավիճակ ստեղծող գործողությունների իրականացումը.
- ավտոտրանսպորտային և այլ տեխնիկայի երթևեկությունը և կանգառը.
- տարբեր բեռների և շինությունների պահեստավորումը, ինչպես նաև թափոնների կուտակումը,
- ավտոտրանսպորտային միջոցների լվացումը, նորոգումը, հեղուկների և այլ վնասակար նյութերի թափումը,
- կանաչ տարածքներին վնաս հասցնող իրավական ակտերով արգելված այլ գործողությունների կատարումը:

Կանաչ տարածքների վարձակալները ստանձնում են դրանց պահպանությունն ու խնամքը, ինչն ամրագրվում է համապատասխան պայմանագրով:

7. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու ընթացքում կանաչ տարածքների պահպանումը

Կանաչ տարածքներում ձեռնարկատիրական գործունեությունն իրականացվում է կանաչ տարածքների պահպանման պահանջներին համապատասխան:

Կանաչ տարածքներում ձեռնարկատիրական գործունեություն իրականացվում է միայն լիազորված մարմնի կողմից տրված թույլտվությունից հետո:

Կանաչ տարածքներում ձեռնարկատիրական գործունեության ընթացքում արգելվում է պայթյունավտանգ, հրդեհավտանգ և թունավոր նյութերի օգտագործում, տարածքի աղտոտում և այլ գործողություններ, որոնք կարող են հանգեցնել կանաչ տարածքների վնասմանը և ոչնչացմանը:

8. Վնասների հատուցում

Կանաչ տարածքներին հասցված վնասը ենթակա է հատուցման՝ բացառությամբ սույն կարգի 4-րդ կետով նախատեսված դեպքերի:

Վնասի հատուցման չափը որոշվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ելնելով կանաչ տարածքի փոխհատուցվող արժեքից:

Բոլոր տեսակի վնասակար գործողություններից հասցված վնասի գնահատումը կատարվում է՝

- կանաչ տարածքի անօրինական վնասման կամ ոչնչացման դեպքում.
- ծառերի և թփերի օրինական /թույլատրված/ հատման և հողաբուսաշերտերի պինդ ծածկույթով փոխարինման դեպքում:

Փոխհատուցումը կատարվում է գումարային կամ կանաչ տարածքը վերականգնելու ձևով:

Վնասի փոխհատուցումը կանաչ տարածքը վերականգնելու ձևով իրականացվում է վնաս հասցրած սուբյեկտի և լիազոր մարմնի միջև կանաչապատման աշխատանքների իրականացման վերաբերյալ պայմանագրի կնքման հիման վրա:

Վնասը համարվում է ամբողջությամբ հատուցված՝ լիազորված մարմնի կողմից կատարված աշխատանքների ընդունումից հետո:

9. Չհատուցվող վնաս

Կանաչ տարածքներին հասցված վնասը ենթակա չէ հատուցման հետևյալ դեպքերում՝

- սանիտարական հատումների և կանաչ տնկարկների վերաձևավորման,
- սանիտարական և հակահամաճարակային հսկողություն իրականացնող մարմինների եզրակացությամբ՝ բնակելի և ոչ բնակելի տարածքների նորմատիվային լուսավորության ռեժիմի վերականգնման,
- բնական աղետների /փոթորիկ, երկրաշարժ և այլն/ հետևանքներով առաջացած ավերածությունների,
- Չորացած կամ տապալման ենթակա ծառերի և թփերի հեռացման:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ>> ԿԱՆՈՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կանոնների նախագիծը չի առաջացնում ավագանու այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ>> ԿԱՆՈՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Կանոնների նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի հ.30 կետին համապատասխան, ըստ որի՝ Երևանի ավագանին որոշում է ընդունում Երևանի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման վերաբերյալ:

Նշված կանոնների ընդունումն ապահովելու է ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների արդյունավետ պահպանման, օգտագործման, վերարտադրության, փոխհատուցման և նոր կանաչ տարածքների ստեղծման հետ կապված հարաբերությունների կարգավորումը:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ